

II. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՇ ՈՂԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

(«Պատմաքաճախրական հանդես», քիվ 1, 1995 թ.,

ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, էջ 7-19)

«Հայ ժողովուրդը,- գրում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը,-
իր դարավոր պատմության ընթացքում քիչ ողբերգություններ չի
ունեցել, բայց այն. ինչ կատարվեց թուրք-օսմանյան պետության
կողմից 1915-1916 թթ. եզակի ու աննախընթաց մի ոճրագործություն
էր, որը դարձավ մեր ժողովրդի ամենամեծ ողբերգությունը»:

Այդ ոճրագործությանը անդրադարձել են ոչ միայն
հայերը, այլև ուրիշ ժողովուրդների պետական գործիչները,
գիտության ու արվեստի շատ ականավոր ներկայացուցիչներ:
Հորվածում քերված են Հ. Մորգենթաուի, Վ. Գորդլակու,
Ֆ. Նանսենի, Հ. Լեփսիուսի, Ա. Վեգների, Մ. Գորկու, Վ. Բրյուսովի,
Ու. Չեչչիլի և շատ այլ հանրահայտ մարդկանց կարծիքներն ու
բնութագրումները հայոց ցեղասպանության մասին:

Թեև տասնամյակների ընթացքում հայերի ցեղասպանու-
թյան փաստը վավերացնող հարյուրավոր գրքեր են գրվել, բայց
թուրք պատմագրությունը համառությամբ փորձում է այն ժխտել:
Անդրադառնալով 1910-1911 թթ. Մալմեդիկում երիտթուրքերի
գաղտնի խորհրդակցություններին, թուրք ղեկավարների ճառերին ու
հորդորներին, հեղինակը եզրակացնում է, որ հայոց ցեղասպանու-
թյունը նախօրոք ծրագրված պետական քաղաքականություն է եղել,
որը և ամօրինակ դաժանությամբ իրականացվեց:
Մ. Ներսիսյանը բացարձակ կեղծիք ու շաղակրասանք է համարում
այն մտայնությունը, թե իբրեւ եթե 1914-ին չկազմակերպվեին հայ
կամավորական խմբերը, ցեղասպանությունը չէր լինի: Բերված են
թուրք պաշտոնյա Նայիմ բեյի խոսքերը այս առթիվ, պաշտոնյա,
որը համարձակվել է չկատարել կենտրոնի հրահանգը և հեռացվել է
պաշտոնից: «Ես կարծում եմ, որ հայերի աքսորն ու կոտորածը...
իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև

այժմ գրված պատմությունների մեջ: Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացքդ նետես, որ խոր կիծոն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»:

Ոճրի նախապատրաստումն ու իրականացումը հաստատող վկայություններ են բերված գերմանական արխիվներից, գերմանացի պաշտոնյաների գաղտնի գրություններից: Հիշատակված են պարսիկ և արաբ ականատեսների վկայությունները:

«Այսպիսով այլազգի հեղինակների, ինչպես և ջարդերից փրկված հայերի վկայությունները,... կասկած չեն թողնում այն մասին, որ երիտթուրքերի կառավարությունը 1915-1916 թթ. իրոք կոզմակերպել է արևմտահայության Մեծ եղեռնը»- եզրակացնում է Մ. Ներսիսյանը:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ կարևոր տեղեկություններ ու վկայություններ են հրապարակվել 1919 թ. Կ. Պոլսում և 1921 թ. Բեռլինում տեղի ունեցած դատավարությունների ժամանակ, որոնց հիման վրա թուրքական ռազմական դատարանը հեռակա կարգով մահապատժի է ենթարկել երիտթուրքերի կառավարության ղեկավարներին՝ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Նազըմ բեյին, Բեհաէդդին Շաքիր բեյին և այլոց, որոնք ավելի ուշ ընկան հայ վրիժառուների զնդակներից:

Այդ նույն հրապարակումների շնորհիվ էր, որ գերմանական դատարանը արդարացրեց Սողոմոն Թեհլերյանին: Հեղինակը քաղվածքներ է մեջբերել Թեհլերյանի դատապաշտպանների դատարանում ունեցած ելույթներից:

Սի գուգահեռականով ներկայացվում է երիտթուրքերի և հիալերյան ֆաշիզմի ծրագրումների ու դրանք գործադրելու մանությունը, գործելակերպը: Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը շարունակվեց և հետագա տարիներին, երբ թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան և Անդրկովկաս: Զաղվածքներ կան Հովհ. Թումանյանի ստորագրությամբ մի փաստաթղթից, որը ներկայացնում է բուրքերի կատարած բարբարոսությունները: Քեմալականները, անցնելով իշխանության գլուխ, շարունակեցին երիտթուրքերի հայաջինջ քաղաքա-

կանությունը: Բերված են վավերական փաստեր: Եվ կթե թուրքերին հաջողվեց հասնել իրենց վերջնական նպատակին՝ հայ ժողովրդի իսպառ ոչնչացմանը. ապա դա եղավ ոռոսական 11-րդ բանակի միջամտության շնորհիվ, գրում է հեղինակը:

Խոսելով Անդրկովկասում կատարված ողբերգական անցքերի մասին, հեղինակը գգոնության կոչ է անում ժամանակակիցներին. «Կարծում ենք, որ մեր օրերի քաղաքագետները, որոնք փորձում են մոր «գյուտեր» անել ու մոր ուղիներ փնտրելու նպատակով վերանայել ամեն ինչ, կատարում են կոպիտ սխալ: Նրանք չպետք է անտեսեն պատմության դասերը, այսինքն այնտեղ է պահպանեն Իսրայել Օրու, Հոլոստի Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Խաչատուր Աբովյանի, Ներսես Աշտարակեցու, Բաֆթու, Գրիգոր Արծրունու, Կոմիտասի, Գրիգոր Զոհրապի, Հովհ. Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և մեր մյուս խմաստուն այրերի պատգամները ոռոսական կողմնորոշման մասին»- գրում է Մ. Ներսիսյանը:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ.Գ.,

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ 1915-1916 թթ. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՁԸ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, 1995, էջ 11-21)

Հեղինակը գտնում է, որ չնայած հայոց ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունեցող հարուստ գրականությանը, փաստագրական նյութերին, գրված ու հրատարակված ոչ միայն հայ, այլև օտարազգի հեղինակների կողմից, այնուհանդերձ Մեծ եղեռնի պատմության մի շարք հարցեր դեռևս կարիք ունեն հանգամանալից ուսումնասիրության: Ավելին, քննարկվող խնդրի վերաբերյալ հրապարակված որոշ աշխատություններում առկա են զգալի բացթողումներ, սխալներ: Հեղինակը հիշատակում է դրանցից մի քանիսը.

ա) իթթիհադականների մասին տարբեր լեզուներով գրված մի շարք աշխատություններում անբավարար է լուսաբանվել 1909-1914 թթ. նրանց վարած քաղաքականությունը ազգային հարցում, մասնավորապես հակահայկական ծրագրերը: Խորությամբ չեն

ուսումնասիրվել Սալոնիկ քաղաքում երիտթուրքերի 1910-1911 թթ. կայացած գաղտնի խորհրդակցությունների և համազումարի ազգայնամտական գործումները, որոնք կանխորոշեցին 1915-1916 թթ. ցեղասպանությունը: Որոշ աշխատություններում չեն հիշատակվում բազմաթիվ փատտեր, որոնք հաստատում են երիտթուրքերի գործնական քայլերը դեռևս 1912-1913 թվականներին՝ կազմակերպելու համար հայերի զանգվածային կոտորածները: Հոդվածում բերված վկայությունները հաստատում են երիտթուրքերի հակահայ քաղաքականությունը դեռ 1911-1913 թթ., երբ տակավին խոսք չկար հայերի ըմբոստության մասին:

բ) Թուրքիայի նոր պատմությանը նվիրված պատմագիտական մի շարք ուսումնասիրություններում այն տեսակետն է արտահայտվում, որ իբր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացիներն են վարել Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը, որ իբր թուրքերը կատարել են գերմանացիների կամբը:

Այսպիսի կարծիք է հայտնել նաև ռուս թուրքագետ Ա. Միլլերը: Մինչդեռ իրականությունն այն է, որ 1915-1916 թթ. հայերի ցեղասպանությունը երիտթուրքերի կողմից տարիներ առաջ մշակված ծրագրի իրականացումն էր՝ Գերմանիայի հովանավորությամբ: Հիմնական մեղքը ընկնում է Էմվեր, Թալեթաթ, Ջևմալ փաշաների և մյուս մոլեռանդ թուրք գործիչների վրա: Անգլիացի ականավոր պատմաբան Վ. Գոդվալդը հայերի ցեղասպանության հարցում խիստ գերազնահատում է կրոնական գործոնը:

գ) Եվրոպական և ամերիկյան հեղինակների ուսումնասիրություններում չեն օգտագործված ռուսական աղբյուրների տվյալները, արխիվներում պահպանված փաստաթղթերը, զրոյն է Մ. Ներսիսյանը, գտնելով, որ ռուսական արխիվների պաշտոնական մյուսիքը հիմնովին հերքում են ռուսաֆորների (ռուսատյացների) հնարած այն առասպելը, թե Ռուսական պետությունը ինչպես 1890-ական թթ., այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իբր ցանկացել է «զրավել Արևմտյան Հայաստանը առանց հայերի»:

դ) Մի շարք պատմաբաններ այն կարծիքին են, թե Աբդուլ Համիդի ձեռնարկած 1890-ական թվականների կոտորածները չի կարելի համարել ցեղասպանություն, դրանք իրականում հետապնդել են պատժողական նպատակներ: Սակայն ինչպես նկատում է հեղինակը, «Պատմական փաստերի բարեխիղճ ու մանրազնին ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ գազանաբարո «կարմիր Սուլթանը» մույնպես կիրառել է ցեղասպանության քաղաքականություն, այնպիսի քաղաքականություն, ինչպիսին կիրառեցին երիտթուրքերը 1915-1916 թթ.»:

ե) Մ. Ներսիսյանը ճշմարիտ չի համարում այն տեսակետը, ըստ որի մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը հայերը Թուրքիայում ապրել են հանգիստ ու ապահով, և իբր Սուլթանը դիմել է ճնշումների միայն այն ժամանակ, երբ «ապերախտ» հայերը բարձրացրել են խռովություններ ու ապստամբություններ: Հեղինակը մի քանի օտարազգի գիտնականների աշխատություններից վկայություններ բերելով հաստատում է հայերի իրավագուրկ լինելու փաստը:

զ) Ցեղասպանությանը վերաբերող մի շարք աշխատություններում այն կարծիքը կա, թե իբր բոլոր մեծ տերությունները ցուցաբերել են անտարբերություն և ոչինչ չեն ձեռնարկել՝ կասեցնելու արհավիրքը:

Մ. Ներսիսյանը գտնում է, որ այս տեսակետը, որն իշխում է հրապարակախոսության մեջ, թերի է և չի բացահայտում ամբողջ ճշմարտությունը: Ամերիկյան, Անգլիան, Ֆրանսիան իրոք անտարբեր մնացին հայության ողբերգության հանդեպ, Գերմանիան՝ հովանավորեց թուրքերին, մույնիսկ մասնակցեց հայերի տեղահանության կազմակերպմանը:

Իսկ ինչպիսի՞ն էր Ռուսաստանի բռնած դիրքը: «Ցարական կուտավարությունը, իհարկե, բռնապետություն էր, վարում էր սոցիալական ու ազգային ճնշման քաղաքականություն, մերժում էր հայկական պետականության ստեղծման գաղափարը... Սակայն հակառակ այդ բոլորին, Ռուսաստանը ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, հավատարիմ հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների դարավոր ավանդույթներին, 1915-1917 թթ. ինչպես նաև նախորդ ավելի քան երկու հարյուր տարվա ընթացքում, աշխատել է ապահովել, պահպանել հայերի ֆիզիկական գոյությունը, հանդես է եկել թուրք

շովինիստների հայաջինջ քաղաքականության դեմ, փորձել է խաթարել պանթուրքիստների ծրագրերը: Հայկական հարցում համընկել են Ռուսաստանի և հայ ժողովրդի շահերը» - գրում է հեղինակը:

Մի շարք հեղինակներ անտեսելով փաստերը փորձում են հիմնավորել այն կարծիքը, թե իբր ինչպես 1890-ական, այնպես էլ 1915-1916 թթ. Ռուսաստանը ցանկացել է զրավել Արևմտյան Հայաստանը, և այն հայաթափ անել: Ոմանք էլ այն միտքն են հայտնում, թե իբր 1915-ին ոռոս զորքի մահանջը նպատակ ուներ հնարավորություն տալ թուրքերին կազմակերպելու արևմտահայության նոր կոտորած: Այսպիսի կարծիքները չեն համապատասխանում իրականությանը: Այս տեսանկյունից էլ հողվածի հեղինակը քննադատում է Տաճառ վարդապետ Յարտմյանի 1993 թ. Վենետիկում լույս ընծայած «Նյութեր հայ ժամանակակից քաղաքական պատմության» գրքի մեջ տեղ գտած ոչ ճիշտ մեկնաբանություններն ու եզրակացությունները՝ ըստ որի «Մեծ եղեռնի մեղքը ընկնում է Կ.Պոլսի հայ պատրիարքի և արևմտյան ոռոսասեր մտավորականության վրա»: Մեծ եղեռնի պատմությունն աղավաղող նման կարծիքներ արտահայտել են մասնաւոր հայ հեղինակներ: Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի կարծիքով այդ կոսլիտ սխալների պատճառն այն է, որ հաճախ պատմության հարցերի մասին գրողները ոչ թե մասնագետներ, պրոֆեսիոնալներ են, այլ պարզապես դիլետանտներ, սիրողներ:

ՈՐԲԵՐՅԱՆ, ՌԻԹԱ (ԱՄՆ)

ՄՈՒՆԶ՝ ԱՂԵՏԻՆ, ԴԻՄԱՅ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 1, 1995 թ., էջ 31-39)

1993 թ. Ամերիկայում լույս է տեսել բանասիրության դոկտոր Ռուբինա Փիրումյանի նոր գիրքը անգլերեն՝ «Աղետին անդրադարձը գրականության վրա. բաղդատական մը հայկական ցեղասպանության և հրեական ողջակիզման միջև» խորագրով (229 էջ):

Ռիթա Որբերյանը իր հողվածում գրախոսականի ձևով ներկայացրել է վերոհիշյալ գիրքը:

«Ձինված ակադեմիական գրական քննադատության մեթոդաբանական գիտելիքներով հարգարժան դեկտորը մեր ընթերցող հանրությանը հրահմուց արժեքավոր աշխատություն» - գրում է Ռաբրյանը: Ռ. Փիքումյանը իր գրքին բնաբան է ընտրել Ալեխոյ Առաքմյանի «Կույր աշուղը» քերթվածի հայտնի տողը. «Այսքան աղյուս բն ձեզ ներեն մեր ողորդ, թող ողջ աշխարհ հային կաթալա նախատինք»:

Որբերյանը գրում է, որ այս գիտակցությունն է մղել Փիքումյանին գրելու այս գիրքը: Հայտնիությունը երբեք չի կարող մոռանալ իր մեկ ու կես միլիոն նախադասականների հիշատակը, որքան էլ ժամանակը առաջ վազի:

«...Աշխարհի նախատինքին չենթարկվելու վճռականությունը պատճառած է ծնունդը այս երկին, չոր հեմ-դիմաց գիրարկվածներն 20-րդ դարում առաջին կիսուն գործադրված մեծագույն երկու ոճիքները հանդես երկու հավաքականություններու, որոնց ճակատագիրներու անգիտությունը և ոճիքներուն անդրադարձագողումը իրենց գրականություններուն ձևին և խոսքին վրա՝ ընթերցողին կենդանիացնեն նյութին մոտեցումի հետաքրքրական և աննախընթաց տեսանկյուն մը»:

Հուլիսի հեղինակը հայանում է, որ Փիքումյանի գիրքը քաղկացած է յոթ գլուխներից՝ «որոնց ավարտին ընթերցողը կգանե ռասմնասիրության եզրափակումը, բժախնդրորեն պատրաստված մատենագիտությունն ու հատուկ անուններու ցանկերը»: Ինչու է դեկտոր Փիքումյանը դիմել քաղաքատության եղանակին: Այս հարցի պատասխանը Որբերյանը տալի է Փիքումյանի գրքի առաջաբանից: «Որքան խորացա,- գրել է Փիքումյանը,- հայ գրականության վրա Աղեհի ազդեցիկ ուղղադարձի մեջ, այնքան սովելի անդրադարձա, որ գրական պատկերի մը գեղեցկությունը, գրական երկի մը միասնությունը, կամ լեզվի մը խառնությունը դատելու սովորական գործիքները անատակ կննային ընտրված ողբերգական նյութին պարագային: Անդրադարձա թե կարգ մը պարագաներու, երկերու լեզվին պոետությունը, անատակությունը, մույնիսկ, անդամալուծումը սովելի նպատակահարմար ձևով կաթառահայտեին ցեղասպանության ծայրահեղ բրտության և խժոժության քառսային և սադայելական մթնոլորտը: Հայ գրական քննադատության մեջ

առաջնորդի մը, մեկնաբանության մեթոդաբանության մը, կամ ցեղասպանության գրականության տեսանկյունից մը զանեղ ապստրոփում փնտրտութս թայեռս առաջնորդեցին Ռոջակեզի գրականության մասին հրեական մոտեցման»:

Հոլվաժագիրը ասում է, որ Փիքումյանի համոզմունքը Ադետի ազդեցող գրականության վրա չի կարող սահմանափակվել միայն մեկ ադետի շրջանակներում, պետք է ընդգրկել տվյալ ժողովրդի պատմության առաջին էջից: «Լեռջին ադետը միայն տրամաբանական հետևանքն է նախորդ ադետների և տվյալ ժողովրդի հոգեբանական բարդ վիճակների, որին ենթարկված է ժողովուրդը հազարամյակների ընթացքում»:

Ռ. Փիքումյանը իր գրքի առաջին մասում պատմության խորքերում պեղել և հանել է ադետների անդրադարձը հայ ժողովրդի գրականության վրա: Գրքի երկրորդ մասում քննության է առել եսեղեռնային չորս հեղինակների՝ Զարեկ Խաչյանի, Մուրեն Պարբեկյանի, Արամ Անտոնյանի և Հակոբ Օշականի ստեղծագործությունները: Ամեն դեպքում Փիքումյանը զուգահեռներ է անցակցրել հրեական գրականության հետ՝ հետախույզումներ և տարբերությունների հայտնաբերմանը:

«Ըստ Փիքումյանի, - գրում է Ռրբեքյանը, - հսկառակ մեանություններում, հայ և հրեա մտավորականներու առաջարկներում միջև կա հիմնական տարբերություն մը: Մինչ հայերը ջատագով էին ազգային գիտակցության ամրապնդման, հրեաները կջանային իրենց քրիստոնյա դրացիներում հետ հասկացության եզրեր գունել՝ ի սեր համերաշխ գոյակցության»:

Ռրբեքյանը բացատրում է, որ Փիքումյանի գլխից հետապնդում է երկու նպատակ: «Առաջինը արվեստի և գրականության ճամփով հաշտվիլն է Ադետի հետ: Ոչ այն կրավորական հաշտությունը, այլ այն, որ ճիշտ հարցադրումներով, կմղե հայ մտավորականը վերլուծման և բուժիչ պատասխաններ գտնելու մեծ ոճրի ինչուներում և ինչպեսներում, որպեսզի կարելի ըլլա փակել հայ պատմության ու գրականության ողբերգական այդ էջը, և վերապրումը հավիտենականացնելու միջոցներու ձգտիլ արվեստի, լեզվի և գրականության ճամփով: Մեկ խոսքով, իր այս գործով, հեղինակը ըսել կուզե, թե հայ ազգը, իր ժողովրդով և

մտավորական ընտրանիով կմնա մխրճված թանձր տիղմի մը մեջ. որմն ձեռքբազատումը միայն կրնա երաշխավորել նույն ազգին ֆիզիկական և մշակութային կյանքի նորոգումն ու հավերժացումը»:

Երկրորդ նպատակը՝ «ձեռնվելով հայ բազմադարյան գրականության և անոր հռոմեոսին վրա, օրինակներով ցույց տալ, թե տիղմեն դուրս գալու միակ միջոցը հայ ժողովրդի զինյալ ապստամբությունն է ամեն տեսակի բռնարարքներու և զանոնք գործադրող հավաքականություններուն դեմ»:

Որբերյանը ամփոփում է. «Ինչպես հատորի ընթերցումն է հայտ կուգա, դարեր պետք եղած են, որպեսզի երկու ազգերն ալ իրենց ազգային հավաքական տենչերուն իրագործումը դուրս բերին կրթական ծիրեն և հանգին այն եզրակացության, թե Աստծո պետք չէ վստահիլ մարդ արարածին փրկությունը ուրիշ մարդ արարածի բռնությունեն...

...Ըստ իս, Ռուբինա Փիրումյանի բազմակողմանի արժեք ներկայացնող այս գործը կարևոր նպաստ մըն է թե հայ գրականության, թե հայ պատմության և թե Հայկական ցեղասպանության պատմության»:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒՆԱՆՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ՃԱՆԱՇԵՑ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, 1995 թ., էջ 7-11)

Զետեղված է Ռուսաստանի Դաշնության Պետական Դոմայի ընդունած հայտարարության ռուսերեն բնագիրը, որը հանդեսին է տրամադրել Հայաստանում Ռուսաստանի դաշնության դեսպանատունը:

Հեղինակն իր մեկնաբանության մեջ գրում է. «Հայտարարությունը գրված է պատմության խորիմացությամբ և ունի հիդրավի, պատմական նշանակություն: Պատմական է, քանի որ թուրքական կառավարող շրջանները, պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը տասնամյակներ շարունակ փորձել են կեղծել պատմությունը, ժխտել թուրքական պետության կողմից իրականացված բարբարոսությունները արևմտահայության

նկատմամբ»։ Վկայակոչված է և Հովհ. Թումանյանի խոսքը, «Մեր շատ իշնամի և քիչ բարեկամ տեսած ցեղը որքան անհաշտ է եղել իր թշնամիների հանդեպ, առավել երախտահատույց է եղել իր սակավաթիվ բարեկամներին, առաջին հերթին Ռուսաստանին, որն իր հումանիզմի տաքուկ շնչով աջակցել է մեր նյութեղեն և ոգեղեն արարումների կայացմանը, խափանել մեր ծխանի ծուխը վերջնականապես մարելու դիվային վճիռների ասեղ սպառնալիքները»։

«Պետդոմայի հայտարարությունը ունի ոչ միայն բարոյական, այլև քաղաքական մեծ նշանակություն.- գրում է Տ. Սարտիսանյանը.- այն անկասկած դրական դեր կխաղա մաս բուրք ցեղասպանների կողմից հայության դեմ կատարած հրեշավոր ոճրագործության հետագա համընդհանուր դատապարտման և դրանով իսկ պատմական արդարության վերականգնման գործում»։

Ռ.Օ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏԸ

1915 ԹՎԱԿԱՆԻՆ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 1, 1995 թ., էջ 19-31)

Հեղինակի զնահատությամբ Վանի հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության ամենափայլուն էջերից մեկն է։

1915 թվականը օրհասական եղավ հայ ժողովրդի համար։ Նրիտթուրքերի կառավարությունը սկսեց Օսմանյան կայսրության հայ բնակչության բռնազաղթն ու զանգվածային կոտորածները։ Գործի դրվեցին կանոնավոր բանակը, քրդական և ավազակային այլ ջոկատները։ Այդ պայմաններում արևմտահայության մի հատվածը կարողացավ զենքը ձեռքին դիմագրավել ջարդարարներին։ Առաջին ինքնապաշտպանական մարտերը տեղի ունեցան Վան քաղաքում։ Վանի ինքնապաշտպանությանը մասնակցում էր ողջ ազգաբնակչությունը, անկախ սեռից, տարիքից, կուսակցական պատկանելիությունից և հասարակության մեջ գրաված դիրքից։ Հայերի անզիջում, հերոսական դիմադրության մասին հռովածագիրը ներկայացնում է Թուրքիայում Գերմանիայի

դեսպան Վանգենհեյմի. Էրզրումի հյուպատոս Ռիխտերի և այլ լիվանագետների վկայությունները:

Սակայն Թուրքիայի պաշտոնական շրջանները, բուրք պատմագրությունը ու նրանց ծայնակցող արևմտյան հեղինակները Վանի ինքնապաշտպանությունը ներկայացնում են խեղաթուրված ձևով: Հայերի դիմադրությունը բնութագրվում է որպես «կանխատեսված խռովություն» ու դավաճանություն, թե իբր ռուսների դրոշմամբ Վանի բնակիչները զբաղվել են լրտեսությամբ, նրանց տեղեկություններ հաղորդելով օսմանյան զորքի թվաքանակի և տեղաշարժերի մասին: «Ջարմանալի է,- գրում է հեղինակը,- թե նման «խնամքով» մշակված գործողություններ իրականացնող հայերը ինչպես կարող էին թույլ ապլ կռպիտ մի սխալ «ապստամբությունը» սկսել ռուսական զորքի քաղաքին մոտենալուց մեկ ամիս առաջ: Չէ՞ որ դրանով նրանք վտանգում էին իրենց ձեռնարկման հաջողությունը»:

Հեղինակը մեջբերում է Ռուսաստանի արսուաքին զործերի նախարար Ս.Դ. Սազոնովի 1915 թ. մայիսի 1-ի հեռագիրը, ուղղված Լոնդոնի ռուսական դեսպանին, ուր ասված է հետևյալը. «Կասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունը հարուցել է կոտորածը և ոչ թե ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չունեւ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիւ ուժերի դեմ»: Թուրք պատմաբանները անտեսում են օտարերկրացի ակնաւորեսների, Թուրքիայի դաշնակից պետությունների քաղաքացիների վկայությունները, որոնք, ըստ հեղինակի հնարավորություն են ընձեռում ամբողջությամբ հերքել թուրքական կողմի անհիմն մեկնաբանությունները: Անգլիացի պատմաբան Ջեյմս Բրայսը գրել է. «Հայերը Վանում չեն ապստամբել: Հայերը պարզապես պաշտպանվել են...»: Նույն կարծիքին են նաև պատմաբաններ՝ անգլիացի Քրիստոֆեր Ուոքըրը, ֆրանսիացի Իվ Տերմոնը, լիբանանցի Մուսա Պրենսը, եգիպտացի Ֆուադ Հաֆեզը և ուրիշներ:

Ռ.Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ռ.Օ. ՍԱՀԱԿՅԱՆ
ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 1, 1995 թ., էջ 236-239)

Հեղինակները զրախոսել են «Թալեաթ փաշայի դատավարությունը» (սղագրական հաշվետվություն) գիրքը, որը 1992 թ. Մուկվայում ռուսերեն լույս է ընծայել «Ֆենիքս» հրատարակչությունը: Աշխատությունը գերմաներենից թարգմանել է Ջ. Նազիկյանը: Խմբագիրը և նախաբանի հեղինակն է պրոֆ. Ստ. Ստեփանյանը:

Հոգվածի հեղինակների գնահատումով այս գիրքը արժեքավոր ներդրում է հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, որը կնպաստի ռուսալեզու ընթերցողներին իմանալու ճշմարտությունը հայ ժողովրդի մեծ ողբերգության մասին:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Շադոտներուրգ փողոցում Մոդոմոն Թեիլերյանի զնդակից ընկավ հայոց ցեղասպանության կազմակերպիչ, օսմանյան կայսրության արտաքին գործոց նախարար Թալեաթ փաշան: Այս առիթով Բեռլինում հունիսի 2-3-ը տեղի ունեցավ հայ վրիժառուի դատավարությունը, որը ցնցեց աշխարհը: Դատարանի նախագահն էր դոկտոր Լեմբերգը: Դատավարությանը մասնակցեցին հասարակության տարբեր խավերից 12 նրդվյալ ատենակալներ: Վճիռ եզակի էր իր բնույթով: Առաջին անգամ «մարդասպանը» արդարացվում է, իսկ սպանվողը՝ դուստապարտվում:

Հեղինակների կարծիքով դատավարության ընթացքում կրավարակված նյութերը անհերքելիորեն ապացուցեցին, որ արևմտահայության 1915 թ. ցեղասպանությունը թուրք կառավարողները ծրագրավորել էին նախօրոք և իրականացրել ամենադժնի հղանակներով: Դատարանում ցուցմունքներ է տվել և նշանավոր արևելագետ Լեփսիուսը: Թեիլերյանի դատապաշտպան դոկտոր Վերթասերի այն հարցին, թե որն էր հայերի ցեղասպանության պատճառը, Լեփսիուսը պատասխանել է. «Համաթուրքական, համախալամական պետություն ստեղծելու գիտավարը, նրտեղ քրիստոնյաների համար տեղ չէր լինելու»:

Մանրամասնորեն ներկայացնելով հայկական արեավիքների սլատճառները, Լեվսիտար իբրև հիմնավորում իր փաստարկների, վկայակոչել է 1919 թ. Կ.Պոլսի Ռազմական ապանի վճիռը, որով բուրքական տրիբունալը հեռակա մահվան է դատապարտել Թալեաթին: Այնհայտ է, որ Թալեաթը ոչ թե սովորական պաշտոնյա է եղել, այլ հայերի ցեղասպանության մտաեղացման հեղինակը և նրա իրականացման կազմակերպիչը: Ուրեմն, Թալեաթը ոչ թե մարդասպան էր, այլ ժողովրդասպան, և Թեհլերյանը ոչ թե մարդասպան, այլ վրիժառու, թուրք ռազմական ատյունի վճիռը ի կատար ածողը:

Դատավարությանը որպես փորձագետ հրավիրվել է նաև գեներալ Լիման ֆոն Ջանդերսը, որը համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Թուրքիայում եղել է գերմանական ռազմական առաքելության ղեկավարը:

Չնայած գեներալը հայկական կոտորածների ողջ մեղքը փորձում էր բարդել տեղական իշխանությունների, մասամբ քրեական տարրերից ու ավարառուներից կազմված ոստիկանության և քրդերի վրա, այսուհանդերձ հարկադրված էր խոստովանել, որ գլխավոր մեղքը ընկնում է երիտթուրքական կառավարության վրա:

Դատավարության երկրորդ օրը մեղադրական ճառով հանդես է գալիս դատախազ Գոլմիկը՝ պահանջելով մեղավոր ճանաչել Թեհլերյանին կանխամտածված սպանության համար: Ապա խոսք են առնում Թեհլերյանի դատապաշտպաններ Ադուֆ ֆոն Գորդոնը, Յոհաննես Վերթաուերը և Նիմայերը: Ապացուցելով, որ ցեղասպանության պարագլուխներից մեկը եղել է Թալեաթ փաշան, Վերթաուերը գտնում է, որ պետք է արդարացնել Թեհլերյանին, քանի որ նրա արարքը մարմնավորում է արդարության ոգին ընդդեմ բռնության, անմարդկայնության: Դատապաշտպան Նիմայերը հայտարարում է, որ թեև իրենք խոսափել են գործին քաղաքական բնույթ տալուց, բայց չեն կարող չասել, որ Գերմանիան լուծյան մատնելով և քողարկելով հայկական ջարդերը, դրանով իսկ մեղսակից է թուրքերի գործած ոճիրներին:

Դատարանը որոշում է ազատ արձակել Թալեաթին սպանողին: Այս վճիռը գնահատվել է իբրև զերմանական արդարադատության հաղթանակ:

Դատավարության նյութերը հրապարակվեցին նույն 1921թ. «Թալեաթ փաշայի դատավարությունը (սղագրական հաշվետվություն)» խորագրով, որի առաջաբանը գրել է Արմին Աեզները, որն ականատես է եղել թուրքերի վայրագություններին և կատարել բազմաթիվ լուսանկարահանումներ:

Տարիներ անց՝ 1992-ին ժողովածուն վերահրատարակվեց, այս անգամ հայտնի հայագետ հրապարակախոս Տեսսա Հոֆմանի առաջաբանով և նույն քվականին էլ աշխատությունը լույս է տեսել ռուսերեն:

Ն.Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, 1995 թ., էջ 41-49)

Անցյալ դարի 70-80-ական քվականներին հայ հասարակական մտքի և պատմագրության նշանավոր ներկայացուցիչներին ամենից առաջ զբաղեցրել են հայկական հարցի արծարծումները, արևմտահայության նկատմամբ Թուրքիայում կիրառված ջարդերի քաղաքականությունը և հայ ազգային-ազաաագրական շարժումների հետ առնչված այլևայլ խնդիրներ:

Թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի, հայկական հարցի և արևմտահայերի կտորածների լուսաբանման մինչխորհրդային անցյալը հարուստ է զուտ պատմագիտական գրականությամբ, բայց այդ անցյալը թողել է պատմագիտական մի ժառանգություն, որը կատարված իրադարձությունները մեկնաբանել է տնտեսական, հասարակական-քաղաքական և դիվանագիտական բազմազան տեսանկյուններից:

Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության՝ Մեծ Եղեռնի վերաբերյալ հայերեն և այլ լեզուներով լույս են տեսել ոչ քիչ աշխատություններ, որոնցում բացահայտված են այն ծանրագույն

համցագործությունները հայ ժողովրդի նկատմամբ, որն իրագործեց ռազմաստեղ պանիսլամիստ, պամիրոքիստ ջարդարությունների պետությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Հիրավի 80-ամյա այդ գրականությունը շրջանառության մեջ է առնում հիմնականում անկողմնակալ այնպիսի փաստական տվյալներ և ակամատեսների վկայություններ, որոնք ամբակայում են նրա անհերքելի և մշտամնա արժեքը:

Իր հայրենիքի վշտերի, հայ ժողովրդի տանջանքների կողքով անտարբեր չէր կարող անցնել ամենայն հայոց բանաստեղծը Հովհաննես Թումանյանը,- գրում է եեղինակը: Դեռևս մեծ եղեմնից առաջ 1913 թ. տպագրված «Հայկական հարցն ու իր լուծումը» եռալիստում բանաստեղծը գրում էր, որ ուսական տիրապետությունը փրկարար ազդեցություն ունեցավ Հայաստանի մի մասի՝ անդրկովկասյան հատվածի վրա:

Ռուսաստանի դերի բումանյանական ընկալումը պայմանավորված էր պատմության խորունկ խնացությամբ, այն իրողության գիտակցությամբ, որ հայ-ռուսական բարեկամությունն ամրապնդվել է փոխադարձ վստահության և համատեղ թափված արյամբ: Թումանյանը մոլորություն էր համարում այն մտայնությունը, թե իբր Անգլիան և Ֆրանսիան եղել են Հայկական հարցի լուծման համակիրներ: Նրա կարծիքով այդ կարգի մոլորության ակունքները անհրաժեշտ է փնտրել Գլադստոնի, Դիլմոնի, Բերերի, Պրեսանսեի մնացած լավ մարդկանց ճառերի մեջ. «ի պաշտպանություն հայ ժողովրդի, ընդդեմ Թուրքիայի վատթար կառավարության», ճառեր, որոնք իրական օգնության ոչ մի երաշխիք չէին պարտնակում, քանզի «իրենց պետությունները միշտ էլ դեմ են եղել Հայկական հարցին»:

Հեղինակը նշում է, որ խորհրդահայ պատմագրությունը իր սկզբնավորման առաջին իսկ շրջանից անցյալի ժառանգության յուրացման գործում ցուցաբերեց ոչ համապարփակ և անկողմնակալ մոտեցում: Կողմնորոշվելով ամենից առաջ և առավել շատ դեպի սոցիալ-տնտեսական խնդիրները, 1920-30-ական թթ. նա իր էջերից իսպառ կամ համարյա արտաքսեց սօցիալիզմ-ազատագրական պայքարի հիմնահարցը: Ավելին, վերոհիշյալ երկու տասնամյակներին այդ պատմագրությունը գերազանցապես

տարվեց հայ ժողովրդի միայն արևելահայ հատվածի սոցիալ-
հասարակական տեղային և ներդաստանյալ առնչություններով,
ավելի կոնկրետ ուսումնասիրության առարկա դարձրեց
արևելահայերի ապրելակերպը:

Դժբախտաբար սխալ էին մտավ նաև Լեոյի պատմա-
գիտական մտածողությունը: Մեծ պատմաբանը հավատարիմ
չմնաց տակավին 1880-ական թվականների իր իսկ կողմից առաջ
քաշած այն նշանաբանին, թե պատմաբանը պետք է ճանաչի
ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը:

Ինչպես հեղինակն է գրում, խորհրդային ժամանակա-
շրջանում գրած իր մի շարք գործերում Լեոն չկարողացավ
օրյեկալվորեն արտացոլել հայ ազատագրական շարժման
կառնադրողական հիմքերը: «Հու հնագանդ», «կույր գործիք»,
«ցարապաշտ» բառերով կնքված լեռնական սրակումները,
նշանակում էին անգողակի ջուր ցնել թուրք պատմագրության
չբախտաբանին: Լեոն ավելի շատ մեղադրում էր, քան բացատրում,
մոռանալով պատմական ճշմարտությունը:

Գռեհիկ սոցիալոգիզմի և ցիխիզմի դիրքերից գրված Լեոյի
սխալաշատ գրքերից քիչ է տարբերվում Բագրատ Բոքյանի
«Հայաստանը, միջագային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը»
1928-29 թվականներին Մոսկվայում լույս տեսած ռուսերեն
երկհատորյակը: Ն. Մարուխանյանը իրավացի է, երբ գտնում է, որ
մինչև 1950-ական թվականների կեսերը խորհրդահայ պատմական
գրականությունից խորթացել էր հայ ժողովրդի արևմտահայ
հատվածի պատմական ճակատագրի համագոյային արժարժման
հարցը:

Եուրջ քառորդադարյա ընդարձակ ամայության մեջ
նշարելի բարձունք էր Մլրտիչ Ներսիսյանի «Հայ ժողովրդի
ազատագրական պայքարը թուրք բռնապետության դեմ
1850-1870-ական թվականներին» մենագրությունը, որը լույս տեսավ
1955 թվականին, նոր շունչ ներարկելով հետստալինյան հայ
պատմագիտական մտքին և խորհրդածությունների և նշողումների
հոր լիցք տվեց պատմաբանների միջին և նոր սերունդին:

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման
գիտական ուսումնասիրության գործին ոգեկոչող արժեքավոր այս

աշխատությունից բացի սկադեմիկա Մ. Ներսիսյանը նույն թվականին ՀԳԱ «Տեղեկագրում» տպագրել է միջնակարգ դպրոցների համար պատրաստվող հայ ժողովրդի պատմության ձեռնարկի երկրորդ հատորի՝ «Հայ ժողովրդի պատմություն, 1900-1917 թթ.» բաժինը, ուր առաջին անգամ խորհրդահայ դպրոցի աշակերտը պետք է ընդհանուր պատկերացում կազմեր հայկական հարցի, առաջին համաշխարհային պատերազմի Լուվիսյան ճակատի մարտական գործողություններին հայերի մասնակցության, 1915-1916 թվականներին Արևմտյան Հայաստանում և բուրքական կայսրության մյուս շրջաններում հայերի ցեղասպանության և ինքնապաշտպանական կռիվների մասին:

Ղրթ. Ջոն Կիրակոսյանը իր ընդարձակ առաջաբանով Ռ. Մահակյանի հետ կազմեց և խմբագրեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, 1828-1923 թթ.» ժողովածուն, որը լույս տեսավ 1972 թվականին:

Կյանքի վերջին, շուրջ քառորդ դարում Ջ. Կիրակոսյանը հրապարակեց մի շարք մենագրություններ, որոնցում մա վերլուծաբար բացահայտեց հայ ժողովրդի նկատմամբ մի շարք պետությունների վարած երկդիմի, ըստ էության հանցավոր քաղաքականությունը:

Վերջին տասնամյակներում հայ պատմագրությունը զիտականորեն հերքեց թուրք կառավարող շրջանների և պատմաբանների այն հեղուրանքները, թե իբրև Առաջին աշխարհամարտի հենց սկզբից հայերը պատրաստվում էին թուրքական բանակի թիկունքում ապստամբել հոգու Ռուսաստանի, որի համար երևաթուրքերի կառավարությունը հարկադրված էր նրանց տեղահանել կայսրության խոչընդոտ: Հայ պատմագրության կողմից հիմնավորապես հերքվել են նաև թուրք պատմաբան-կեղծարարների մյուս թեզերը (հայերն են կոտարել թուրքերին, որ թուրքական կառավարությունը արևմտահայերին բռնի գաղթեցման է ենթարկել իբրև միայն ինքնապաշտպանական նպատակով):

Վերջացնելով ակնարկը, հեղինակը նկատում է, որ գոեհիկ զաղափարականացման թերությունները վերջին տարիներին

աստիճանաբար հաղթահարվում էին: Խորհրդահայ պատմագիտության զարգացման միտումը վերջին տասնամյակում հնարավոր էր դարձրել ըստ ամենայնի վեր հանել դարերից եկող հայ ազգային ազատագրական պայքարի մաքառումները, լուսաբանել Հայկական հարցի ծագման և նրա զործընթացի էվոյուցիան, արևմտահայերի զանգվածային ոչնչացման թուրքական պետական քաղաքականությունը, բացահայտել մեծ տերությունների խարդախ քաղաքականության զիզզազները հայկական հարցում և հայոց ցեղասպանության գործում, մերկացնելով պատմության կեղծարարներին:

ՍՏԵՓՈՐ ՍՏԵՓՈՐՅԱՆ

ԱՐՄԻՆ ՎԵՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՐ ԵՂԵՆՆԻ ՄԱՍԻՆ

(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, 1995 թ. էջ 33-41)

Գերմանացի նշանավոր գրող, հրապարակախոս, իրավագիտության դոկտոր, հումանիստ Արմին Թեոֆիլ Վեգները ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Վուլպերտալ Էլբերֆելդում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ա. Վեգները աշխատել է Թուրքիայում, գերմանական ռազմական միսիայի սանիտարական ծառայությունում:

1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին շրջագայել է Փոքր Ասիայում, այցելել է Հալեպ, Բաղդադ, Դեր-Ջոր և ակամատես է եղել արևմտահայության սարսափելի կոտորածներին: Այնուհետև աշխատել է Ֆելդմարշալ ֆոն դեր Գուլցի բանակի շտաբում, տեսել է ունսուպատներ, տեղահանված հայերի համակենտրոնացված ճամբարներում կատարված ռհրագործություններ, հանդիպել ու զրուցել է բազմաթիվ հայերի և թուրքերի հետ, որոնք իրեն պատմել ևն հայերի ցեղասպանության զարհուրելի մանրամասնությունները:

Ակումատես լինելով երիտթուրքական իշխանությունների կողմից մահվան ճամբարներում կազմակերպված հայերի բարբարոսական խոշտանգումներին, լուսանկարում է այդ սարսափազդու տեսարանները. դրանք որպես հավաստի վավերագրեր պատմության դատաստանին հսնձնելու համար: Թուրքական իշխանությունները բռնագրավում են նրա ավելի քան

2 հազարի համառոտ մեղադրական լասանքներին մեծ մասը: Ա. Վեզներից հաջողվում է փրկել դրանց մի մասը և ցուցադրել Գերմանիայում իր իսկ հրապարակային ելույթների ժամանակ: Հայոց մեծ եղեռնի մասին գրում ու հրապարակում է մի շարք աշխատություններ, բազմաթիվ հոգովածներ: Ա. Վեզների փաստագրական հարուստ ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում նրա վկայությունները հայոց ցեղասպանության մասին, վկայություններ, որոնք անհերքելի են ու ցնցող:

Հայոց մեծ եղեռնի մասին հուզիչ վկայություն է, օրինակ Ա. Վեզների «Հայ մորը» ակնարկը, 1919 թ. հունվարին «Բաց նամակ հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգների նախագահ պրն. Վուդհո Վլադմիրին», ուր ընդգծված է «երբ թուրքական կառավարությունը 1915 թ. զարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերի երկրի երեսից բնաջնջելու իր երեշավոր ծրագրի իրագործմանը, Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում ոչ ոք չխանգարեց Թուրքիայի խավարամիտ տիրակալներին իրականացնելու այն տանջալից խոշտանգումները, որոնք կարող են համեմատվել միայն խելագար հանցագործի գործողությունների հետ: Այդպես նրանք մի ամբողջ ժողովրդի՝ սղոսմարդկանց ու կանանց, ծերունիների և երեխաների, հղի մայրերի և ծծկեր մանուկների թշնջին արարական անապատները միայն մի նպատակով՝ սովամահության մատնել բոլորին»:

1921 թ. հունիսի 2-3-ին Բեսլինում սեղի ունեցած հայանի դատավարության ժամանակ նա հանդես է եկել որպես վկա և երդվյալ ատենակալներին առաջարկել է ցուցադրել հայկական կոտորածների ու տեղահանությունների իր իսկ նկարահանում ողբերգական պատկերները: Հայերի ցեղասպանության վերաբերյալ Ա. Վեզների վկայությունները համառոտ ու պատկերավոր ձևով շարադրված են 1921 թ. հրապարակված «Թալեաթ փաշայի դատավարությունը» սղագրության առաջաբանում:

Բնութագրելով բեռլինյան դատավարությունը, Ա. Վեզները այն կարծիքն է հայտնել, որ իր առանձնահատկությամբ և որ զլխավորն է՝ ընդունած արդարացի վճռով, այն համաշխարհային պատմական նշանակություն ունի. «Այո, ես այն կարծիքին եմ, գրում է Վեզները, - որ դա պատմության կամքն էր, երբ զոհերից մեկի

ձեռքով սպանվեց Թալեաթը... Ինքը՝ Սողոմոն Թեկերյանը միայն խորհրդանիշն էր. մի հյուլն, որի մեջ խտացված ու ցայտուն արսահայտված էին հայ ժողովրդի վերքերը, նրա ազգային ցավը, խիզախ ինքնապաշտպանությամբ արդարացի հաստատման նրա տենչը»:

Թուրքական ոճրագործությունների և հայկական կոտորածների ականատես Ա. Վեզները իր ուսումնասիրությունների և քաղաքագիտական վերլուծությունների հիման վրա այն հետևությունն է արել, որ հայերի ցեղասպանությունը ծրագրված էր վաղօրոք, «Իթքիեադ վե Թերաքքի» կազմակերպության կողմից: Ա. Վեզները հաստատականորեն մերկացնում է թուրքական իշխանությունների բոլոր տեսակի պատճառաբանությունները հայերի տեղահանության և ֆիզիկական բնաջնջման հարցում: Նա բացահայտ անհիմն է համարում «ռազմական անհրաժեշտությամբ» հայերի տեղահանության վարկածը: Այդ կապակցությամբ նա գրել է. «Ինչպես բացատրել արևմտաանատոլիական վիլայեթներից հայ բնակչության բռնի տեղահանությունը, որտեղ հայերի չափազանց փոքրամասնությունը որևէ վտանգ չէր կարող ներկայացնել, չէ՞ որ նրանք ապրում և աշխատում էին ռազմական գործողություններից հարյուրավոր ճղոններ հեռու: Մի՞թե հայտնի չէ ամերիկյան դեսպան Մորգենթաուի առաջարկությունը տեղահանվող հայերին Ամերիկա վերաբնակեցնելու մասին: Հայտնի է նաև այն փաստը, որ թուրքական կառավարությունը ոչ միայն մերժեց այդ առաջարկությունը, այլ դրանով հաստատեց, որ այսպես կոչված ռազմական անհրաժեշտությամբ պայմանավորված այդ միջոցառումը միայն պատրվակ էր, որպեսզի քողարկվեր դարի հանցագործությունը՝ աշխատասեր ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը»:

1922 թ. Ա. Վեզները հրապարակում է «Դիչ Արարատից» գրքույկը, որտեղ կրկին դատապարտելով ու անարգանքի սյունին զամենով հայերի ցեղասպանության կազմակերպիչներին՝ թուրքական բարբարոսներին, միաժամանակ խարազանում է արևմտյան տերությունների հանցավոր անտարբերությունը: Ա. Վեզները արդարացիորեն և իրեն յուրաքանչյուր պատկերավորությամբ մերկացրել է նրանց քաղաքական ու դիվանագիտական

խարդավանքները: Նա ի լուր աշխարհի գրել է. «Ինչ արեցին Արևմուտքի հաղթանակած տերությունները իր հավատի ու ոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին լիակատար բնաջնջումից պաշտպանելու գործում: Թույլ տվեք, Չեզ, այդ պետությունների ղեկավարներին հիշեցնել և ողջ աշխարհին ֆրանսիական խորհրդի նախագահ Կլիմանտյի 1918 թ. հուլիսի 14-ին Հայաստանին ուղղված խոսքերն այն մասին, որ մարդկության և արդարության օրենքների հիման վրա, դաշնակից տերությունները մշտապես իրենց պարտքն են համարում հոգ տանել այդ երկրի ճակատագրի համար: Մի՞թե չեն լսվում, հիշողությունից այդպես արագորեն ջնջվում են Պուանկարեյի մեծադղորդ այն խոսքերը, որոնցով նա դիմեց Կիլիկիայում կաթոլիկ հայերի պատրիարքին»:

Ա. Վեզները անդրադարձել է հետագա տարիներին կատարված իրադարձություններին՝ թուրքական զորքերի 1918-1922 թթ. գազանություններին: Իր այդ հրապարակումներում հատուկ տեղ է հատկացնում Չմյուռնիայի եղբերգությանը:

Նա մատնանշել է, որ թուրքական բարբարոսները իսպառ այրեցին դարերի ընթացքում հույների ու հայերի կառուցած այդ գեղեցիկ քաղաքը, վերածելով այն մոխրակույտի: Նկարագրելով Չմյուռնիայի հայության կոտորածները, նրանց ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ոչնչացումը, Վեզները այն հետևությունն է անում, որ «Հայերի թշնամիները հանդիսանում են նաև մարդկության թշնամին»:

Մերկացնելով եվրոպական պետությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ Ա. Վեզները գրում է. «Դա Եվրոպան է, որ մշտապես ձգտում է մի անարդարությունը փոխարինել մյուսով և չի թաքցնում իր ուրախությունը այնպիսի հաջողության առթիվ, որը ձեռք է բերվել տասնյակ հազարավոր անմեղ կանանց և երեխաների առյան գնով: Եվրոպան, որը զերադասում է վաշխառուական առևտուր անել նրանց տանջամահ անողների հետ, քան փրկել հալածված մարդկային ցեղի բեկորները կործանումից: Այդպես են կատարում Արևմուտքի հաղթող պետությունները իրենց հանդիսավոր խոստումները: Բավական չէ, որ դուք ձեզ ժողովուրդների իմաստուն ծառաներ համարելով, պատերազմի ժամանակ արյունաքամ հայությանը ստիպեցիք Չեք

կամավորները դառնալ: Ավելին, դուք խանգարեցիք երիտասարդ հայկական հանրապետությանը ապաստան տրամադրելու եղեռնից մազապուրծ վախատականներին: Եվ դա այն բանի համար, որպեսզի անչափահաս երեխաները դուրս շարտվեին ամերիկյան որբանոցներից և ոչնչացվեին Վանի բնակչության փրկվածները, որոնք ոչ մի վտանգ չէին ներկայացնում Անգարայի կառավարությանն ու թուրքական պարտններին: Որտե՞ղ է փոքր ժողովուրդների ազատությունը: Մի՞թե Ֆրանսիան չէր զենք տրամադրում Թուրքիային, որն էլ կրակում էր Հայաստանի սրտին...»:

Վեզների կյանքում հուզիչ իրադարձություն հանդիսացավ նրա այցը Հայաստան 1927 և 1968 թվականներին:

Երկրորդ այցին 82 տարեկան Ա. Վեզները իր կնոջ՝ Իրենե Լովալիսկայի հետ, վերհիշելով և պատմելով հայոց ցեղասպանության, դարի առաջին մեծ ողբերգության մասին, մանկան պես զվարճանում էր, տեսնելով հնադարյան Երևանի նորակառույցները: Հոգու ուրախության պտույտումով խոսում էր վերածնված Հայաստանի ծաղկուն կյանքի, նրա տնտեսական, սոցիալական, գիտական ու մշակութային աննախադեպ հաջողությունների մասին:

Հայաստան կատարած երկրորդ, սակայն վերջին այցի կապակցությամբ Ա. Վեզները ասել է. «Ես, որ տեսել եմ այս ժողովրդի ջարդերը, ես, որ ձայնս բարձրացրել եմ հանուն այս ժողովրդի և տեսնելով աշխարհի քար սրտի պապանձվելը, անիծում էի ամբողջ աշխարհին, ահա եկա, տեսա վերածնված հայ ժողովրդին»:

Իր խոսքի վերջում Ա. Վեզները պատգամել է սփյուռքահայության պահպանման հրատապ խնդրի լուծումը: Նա կոչ է արել «Փրկել Արևմուտքի մեջ հետզհետե ձուլվող հայության բեկորները...»:

Արմին Վեզները իր մահկանացուն կնքեց 1978 թվականի մայիսի 17-ին Հռոմում, 92 տարեկան հասակում:

Ռ.Գ. ՄԱՀԱԿՅԱՆ, Ռ.Ա. ՍԱՖԻԱՍՏՅԱՆ
ՄԻԶՈՋԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ
(«Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, 1995 թ., էջ 49-57)

1995 թ. ապրիլի 21-23-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էր հայերի ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովը, ժամանակակից հայագիտական հետազոտությունների ու վավերագրման Ձորյան ինստիտուտի (ԱՄՆ, Բոստոն) մասնակցությամբ:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան մասնագետներ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Իսրայելից, Կանադայից, Գերմանիայից, Լիբանանից, Կիպրոսից, Շվեյցարիայից: Գիտաժողովը բացեց պետական հանձնաժողովի անդամ, ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը: Խոսքը տրվեց ՀՀ նախագահ, պետական հանձնաժողովի նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Լևոն Տեր-Պետրոսյանին, այնուհետև ուղերձով հանդես եկավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գաբրելին Ա-ն: Մասնակիցներին ժողովն օգնեց նաև Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պրոֆատասիանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը, որի համառոտ զեկուցումը վերնագրված էր «80 տարի. երկրորդությունը ընդդեմ մոռացության»:

Լիպարիտյանը նիստում առաջինը զեկուցեց ակադեմիկոս Սյրտիչ Ներսիսյանը «Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցեր» թեմայով: Նա հստակապես նշեց, որ հստակապես չեն բացահայտված Մեծ Եղեռնի գլխավոր պատճառները, մեծ տեղությունների դիրքորոշումը հայկական հարցում և այլն: Նա իր զեկուցման մեջ լուրջ թերություն համարեց այն, որ հայերի ցեղասպանության մասին զրոյ եվրոպական և ամերիկյան պատմաբանների մեծ մասը դեռևս չի

օգտագործել Ռուսաստանի և Հայաստանի պետական արխիվներում պահպանվող նյութերը:

Հայաստանից գեկուցումներով հանդես եկան ևս չորս պատմաբաններ. Ռուբեն Սահակյանը, որի գեկուցումը նվիրված էր ցեղասպանության պատմագրության մեթոդական հարցերին, Ռուբեն Սաֆրաստյանը, որը ներկայացրեց «Քաղաքական կուսակցությունը և ցեղասպանությունը. միություն և առաջադիմություն կոմիտեն «վերջնական լուծման» նախաշեմին» վերնագիրը կրող իր ռուսումնասիրության արդյունքները: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանի գեկուցումը կրում էր «Թուրքամշակութային ցեղասպանություն» վերնագիրը, ուր նշվում էր միջազգային համապատասխան կազմակերպությունների (ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՈ և այլն) միջնորդությամբ հայկական մշակութային արժեքների հետազոտությունները կանխելու անհրաժեշտությունը: Պատմական գիտությունների թեկնածու Գայանե Մախմուդյանի գեկուցումը նվիրված էր «Մոցիսլական ճգնաժամ, արտաքին քաղաքականության երկընտրանքներ և ցեղասպանության սպառնալիքը» թեմային:

Փլիխտվայական գիտությունների թեկնածու Վիկտոր Նադեժին-Ռասևսկին (Մոսկվա) իր գեկուցման մեջ կանգ առավ ցեղասպանության ծագման դեպքերի վրա, անդրադառնալով նրա կիրառման եղանակներին և նրա թողած հետևանքներին: Ջգալի տեղի էր հատկացված նախկին Խորհրդային միության տարածքում տեղի ունեցած բարբարոսական ակտերի բնությունը: Ձեկուցողը շեշտակիորեն դրեց պատմական պատասխանատվության և փոխհաաուցման հարցը:

Առավել մեծ թիվ էին կազմում ԼՍՄ-ի և Կանադայի ռետազոտական տարբեր կենտրոնների գիտաշխատողների և ռամալսարանական դասախոսների գեկուցումները:

Դոկտոր Ջեյմս Ռիդը (Ա. Վրիթնիսի անվան ռետազոտական կենտրոնի աշխատակից ԱՄՆ, Սակրամենտո), գտվելով Թուրքիայի հանրապետության արխիվներից, ցույց տվեց, որ դեռևս միջնադարից օսմանյան քաղաքական ընտրանին ութանի իշխանության դեմ ապստամբած ժողովուրդներին

փորձում էր ոչնչացնել որպես սատանայի կամքի իրականացնող-
ներ:

Ցեղասպանության ուսումնսիրության ինստիտուտի տնօրեն պրոֆ. Հելեն Ֆայնի (ԱՄՆ) զեկուցման մեջ, որը վերնագրված էր «Տեսությունների փորձարկումը վայրագությամբ, Հայաստան-1915, Բոսնիա, Ռուսնդա», հիմնական շեշտը դրված էր նշված երկրներում գործադրված բռնությունների և զանգվածային սպանությունների ընդհանուր կողմերի վրա:

Ամերիկայի հայկական համագումարի (Վաշինգտոն) հետազոտությունների և վերլուծությունների կենտրոնի տնօրեն դոկտոր Ռուբեն Ադալյանը զեկուցեց այն մոր հարցադրումների մասին, որոնք կարող են դիտվել որպես հայոց ցեղասպանության հետևանքների ուսումնասիրման մեթոդաբանություն: Նա ընդգծեց 1915-ի ոճիքի բազմապիսի հետևանքների բացահայտման արդիականությունը, եղեմը վերապրածների կյանքը, անցած ուղին, տառապանքները, հոգեբանական նստվածքները, պատմական հիշողությունները մանրակրկիտ ուսումնասիրելու անհրաժեշտությունը: Չեկուցողը ցույց տվեց նաև, թե ինչպես են վերապրողները, հաղթահարելով եղեմի ծանրագույն հարվածները, գոյատևել և բարգավաճել: Նա կանգ առավ նաև թուրքական պետության կողմից գործադրված հայասպանության մեթոդների վրա:

Նևադայի համալսարանի պրոֆ. Պերո Բերբերտոլուի զեկուցման թեման էր «Հայոց ցեղասպանությունը պատմական դիտանկյունից: Մոցիալոգիական վերլուծություն», որը մի փորձ էր հարցը մեկանաբանելու այդ գիտությանը հասուկ հետազոտական մեթոդների հիման վրա:

Ցեղասպանության հայտնի մասնագետ, պրոֆ. Ֆրանկլին Լիբբլը (ԱՄՆ) «Զարի հաջորդականության կասեցումը» վերնագրով իր զեկուցման մեջ ցեղասպանության երևույթը քննեց փիլիսոփայական-աստվածաբանական տեսանկյունից, դիտելով այն որպես չարի և բարու դարավոր պայքարում չարի ժամանակավոր հաղթանակ: Նա ձևակերպեց հետևյալ կարևոր թեզը. ամեն մի չղատապարտված ցեղասպանության դեպք հանգեցնում է ցեղասպանության երևույթի կրկնության այլ պատմական պայմաններում և հաճախակի ավելի մեծ մասշտաբներով: Այդ թեզը

նա հիմնավորեց հայերի և հրեաների ցեղասպանությունների միջև համեմատական վերլուծություն անցկացնելով, գալով այն եզրակացության, որ հայերի՝ ցեղասպանության նկատմամբ համաշխարհային հասարակական կարծիքի անտարբերությունը հանգեցրեց հրեաների ցեղասպանությանը: Նա առաջարկեց ավելի հանգամանորեն և բազմակողմանի ուսումնասիրել ցեղասպանությունը նախապատրաստած և այն ղեկավարած գործիչների Թալեաթի, Բեհանդդին Շաքիրի, Հիտլերի մարդկային էությունը, բնութագրելով նրանց որպես «սահմանային անհատականություններ», որոնց համար արդեն չեն գործում բարոյականության նորմերը:

Ցեղասպանությունների առանձին դեպքերի համեմատական ուսումնասիրությանն էր նվիրված գեկուցողներ՝ պրոֆ. Բեն Զորնընի (ԱՄՆ) և պրոֆ. Ֆրանկ Միսինի (Կանադա) ելույթները: Պատմական նյութի խոր իմացությամբ պրոֆ. Վահագն Տատրյանը գեկուցեց «Պետության և կառավարող կուսակցության միաձույլ դերը Հայկական ցեղասպանության մեջ» թեմայով: Նա հիմնավորեց այն թեզը, որ հայերի ցեղասպանությունը նախապատրաստել է երիտթուրքական կուսակցությունը, իսկ պետությունը եղել է լույ լծակ նրա ձեռքում: Պրոֆ. Տատրյանը հրապարակեց նաև մի քանի նոր փաստեր, որոնք ճշտում են մեր պատկերացումները ցեղասպանության նախապատրաստման գործընթացի մասին: Մասնավորապես նա նշեց, որ այդ գործընթացում կարևորագույն դեր են կատարել Բեհանդդին Շաքիրը, Նազըմը և Զիա Գյոքալփը, նույնիսկ ավելի կարևոր, քան Թալեաթը կամ Էնվերը:

Ցեղասպանության ժխտման հոգեբանությանն ու ցեղասպան քաղաքականության հարցերին էր նվիրված պրոֆ. Հենրի Հաթթեբախի (ԱՄՆ) գեկուցումը:

Երկու գեկուցում նվիրված էր ցեղասպանության տարբեր դեպքերի դասակարգմանը: Առաջինը՝ պրոֆ. Ռոջեր Սմիթի (ԱՄՆ) գեկուցումն էր «Պետությունը և ցեղասպանության նպատակը. ցեղասպանությունների կիրառումը 20-րդ դարում» թեմայով: Կարևոր էր նրա այն թեզը, որ հայերի «սխառմատիկ ոչնչացումը» օսմանյան Թուրքիայում հանդիսանում է 20-րդ դարի

ցեղասպանությունների նախապայ: Եվ երկրորդ զեկուցողը՝ պրոֆ. Յահուդա Բաուերը (Իսրայել) դասակարգումը կատարեց, հենվելով ցեղասպանությունների պատճառների քննության վրա: Հատուկ ուշադրություն հասկացնելով հրեաների ցեղասպանությանը, նա հանգեց այն կզրակացությանը, որ միայն վերջինս է հանդես գալիս որպես ամբողջային ցեղասպանություն, քանի որ ունի ցեղասպանությանը հատուկ բոլոր բնորոշ գծերը, մասնավորապես՝ այն նպատակատեղիված էր հրեաների լիովին ոչնչացմանը ամբողջ աշխարհում, ի տարբերություն հայերի ցեղասպանության, որի հեղինակները չէին ծրագրել «ոչնչացնել հայերին օսմանյան կայսրության սահմաններից դուրս»:

Բաուերի զեկուցման որոշ թեզերի հետ չհամաձայնեց պրոֆ. Վ. Տառյանը, մասնավորապես նշելով, որ երիտթուրքերը 1918 թ. նոր տարածքներ գրավելով Անդրկովկասում, այստեղ էլ շարունակեցին իրենց հայաջինջ քաղաքականությունը: Նա ընդգծեց, որ հայերի ցեղասպանությունը իր մեջ պարունակում է ցեղասպանությանը հատուկ բոլոր գծերը:

Գիտաժողովում մեծ հետաքրքրություն առաջ բերեց Համբուրգի սոցիալական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, ազգությամբ թուրք, Թաներ Աքչամի զեկուցումը՝ «Հայոց ցեղասպանությունը և թուրքերի լսությունը» վերնագրով: Զեկուցման ընթացքում հետաքրքրական էր նրա արտահայտած այն միտքը, որ Թուրքիայի հանրապետության ստեղծումը էապես առնչվում է հայերի ցեղասպանության հետ:

Հայերի ցեղասպանությանը նվիրված մի քանի գրքերի հեղինակ, ֆրանսիացի դոկտոր Իվ Թերնոնի զեկուցումը ընթերցեց պրոֆ. Անահիտ Տեր-Սիմասյանը: Թերնոնը արտասահմանցի այն մասնագետներից է, որը միանշանակ ու անվերապահորեն ընդունում է 1915-ի ոճիրը, որպես կատարյալ ցեղասպանություն, միաժամանակ քննադատելով ժամանակակից թուրք պատմաբանների անագնիվ դիրքորոշումը: Թերնոնի թեման էր՝ «Ցեղասպանությունից հետո ինչպես վերականգնել անվերականգնելին» (չորս ցեղասպանության համեմատություն):